ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ՝

_____Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է՝

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝

AVANESYAN ANAHIT 7103810157

Подписано: AVANESYAN ANAHIT 7103810157
DN: cn=AVANESYAN ANAHIT 7103810157, c=AM
Дата: 2024.04.03 16:47:19 +04'00'

_____Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔ

ՀԱՅՏ 2025

ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ

ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ

ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՓԱՆԻԿ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՂՈՑ ՇԵՆՔ 2 ԲԱԿԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԲԱՍԿԵՏԲՈԼԻ, ՎՈԼԵՅԲՈԼԻ ԵՎ ԹԵՆԻՍԻ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՓՈՔՐ ԽԱՂԱՂԱՇՏԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Համայնքի և վարչական շրջանի նկարագրություն

Ծրագրի ընդհանուր նկարագրությունը

Ծրագրի հիմնավորումը

Օգտագործված աղբյուրներ

Հավելված 1

ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Արթիկը խոշորացված համայնքը ձևավորվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2017 թվականի հունիսի 9-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն: Այն իր մեջ ներառում է 24 համայնքներ՝ Արթիկ շրջկենտրոնով և Անուշավան, Արևշատ, Գեղանիստ, Գետափ, Լեռնակերտ, Լուսակերտ, Հայկասար, Հայրենյաց, Հառիճ, Հոռոմ, Հովտաշեն, Մեծ Մանթաշ, Մեղրաշեն, Նահապետավան, Նոր Կյանք, Պեմզաշեն, Սարալանջ, Սարատակ, Սպանդարյան, Վարդաքար, Տուֆաշեն, Փանիկ և Փոքր Մանթաշ վարչական շրջաններով:

Համայնքը գտնվում է Արագած լեռան հյուսիս-արևմտյան լանջերին, Շիրակի դաշտավայրի հարավային մասում: Համայնքի տարածքը հիմնականում գտնվում է մթնոլորտային ցուրտ գոտում: Կլիման բարեխառն է, բնորոշ է տաք ամառ, ցուրտ ձմեռ: Ձմեռը տևական է, (100 – 120 օր), ձյունածածկի կայուն շերտով: Տարեկան տեղումների քանակը 500 – 800 մմ (առավելագույնը մայիս ամսին): Համայնքի շրջակայքում գերակշռում են լեռնատափաստանային և ալպյան մարգագետինները: Շրջակա տարածքները հիմնականում անտառազուրկ են: Տիրապետող են հյուսիս-արևելյան և արևելյան քամիները: Արթիկի վարչական տարածքի ընդերքը հարուստ է տուֆ քարի տարբեր տեսակներով:

Շիրակի մարզի Արթիկ համայնքի տարածքը դեռ հնադարում եղել է Հայաստանի կազմում՝ Երվանդունիների (մ.թ.ա. 570-201) և Արտաշեսյանների (մ.թ.ա.189-1) թագավորության ժամանակ: Ավելի ուշ մտել է Մեծ Հայքի Այրարատ նահանգի Շիրակի գավառի մեջ: Տարբեր ժամանակաշրջաններում այն եղել է Կամսարականների, Պահլավունիների, Վաչուտյանների և այլ իշխանների տոհմական կալվածքը: 9-րդ դարի վերջից մտել է Բագրատունյաց թագավորության, ապա՝ Զաքարյան իշխանապետության մեջ: 14-16-րդ դարերում այն մտել է մոնղոլական, ապա՝ կարակոյունլու և ակկոյունլու թուրքմենական պետությունների մեջ: Պարսկաստանի տիրապետության վերջին շրջանում եղել է Երևանի խանության կազմի մեջ: 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո Արևմտյան Հայաստանի Էրզրում և Կարս գավառներից գաղթած հայերը վերաբնակվում են նաև Արթիկում: 19-րդ դարի երկրորդ կեսին Արթիկն իր բնակչության թվով Արևելյան Հայաստանի մարդաշատ բնակավայրերից էր: Այս շրջանում Արթիկը տարբերվել է ճարտարապետական յուրահատկությամբ. Համայնքի բոլոր շինությունների կտուրները կառուցվել են կամարաձև:

Խորհրդային ժամանակներում Արթիկը եղել է զարգացած արդյունաբերական քաղաք: 25 հազար բնակչությամբ քաղաքում գործել են 20-ից ավել մեծ ու միջին գործարաններ, ֆաբրիկաներ, արտադրական և արդյունահանող այլ կազմակերպություններ, որոնք ապահովել են ինչպես քաղաքի,

այնպես էլ հարակից բնակավայրերի բնակչության զբաղվածությունը: 1930 թվականին կազմավորվեց Արթիկի վարչատարածքային միավոր՝ Արթիկի շրջանը: Արթիկը դարձավ շրջկենտրոն: Քաղաքի կարգավիճակ Արթիկը ստացավ 1945 թվականին: Նրա զարգացմանը մեծապես նպաստեց նաև շրջակայքում գտնվող տուֆ քարի տարբեր տեսակի պաշարների արդյունահանումը, ինչպես նաև Լենինական – Արթիկ – Պեմզաշեն երկաթուղու կառուցումը:

Արթիկում ավանդաբար զարգացած է հանքարդյունաբերությունը և քարի վերամշակման արտադրությունը: Համայնքում գործում են ջերմոցային տնտեսություններ, միջին և մանր ձեռնարկություններ, որոնք արտադրում են վակուումային էլեկտրավառարաններ, մետաղական կառուցվածքներ, ապակե տարրաներ, տրիկոտաժ արտադրանք, կահույք, հացամթերք և հրուշակեղեն, կաթնամթերք և արդյունաբերական այլ արտադրանք:

Ներկայումս Արթիկ համայնքը մարզի և հանրապետության մյուս համայնքների հետ սերտ կապերով, դինամիկ զարգացմամբ և ապագայի հստակ տեսլականով համայնք է:

Արթիկ համայնքի մեջ ներառված Փանիկ վարչական շրջանը գտնվում է Արթիկ քաղաքից 5,4 կմ հեռավորության վրա, մարզկենտրոն Գյումրուց՝ 16 կմ հարավ-արևելք, Մանթաշի ձորահովտի և Շիրակի դաշտի միացման վայրում, Մանթաշ գետակի ձախափնյա արգավանդ դաշտում: Բնակչության մեծամասնությունը կաթոլիկ հայեր են: 1812 թվականին Ալաշկերտի Խաստուր գյուղից մի խումբ հայեր վերաբնակվել են Շիրակ գավառի Քավթառլու կոչվող ավերակ բնակավայրում: Փանիկ է վերանվանվել 1925 թվականին: Փանիկը ժամանակին եղել է գրչության կենտրոն:

Վարչական շրջանում առաջին դպրոցը հիմնվել է 1859 թվականին Պողոս վարդապետ Նահապետյանի և նրա եղբոր՝ Սողոմոն Նահապետյանի ջանքերով: Այն սկզբում ունեցել է 1 ուսուցիչ և 38 աշակերտ: Դպրոցում դասավանդվել են հետևյալ առարկաները՝ կրոն, թվաբանություն, աշխարհագրություն, հայերեն, լատիներեն և ռուսերեն լեզուներ: Վարչական շրջանն ունի Մշակույթի տուն, որն ընդգրկված է պատմամշակութային հուշարձանների ցանկում: Բնակչությունը զբաղվում է դաշտավարությամբ, այգեգործությամբ, մեղվաբուծությամբ և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ:

Վարչական շրջանում կա գործող կաթոլիկ եկեղեցի, որը կոչվում է Փանիկի Սուրբ Տիրամայր եկեղեցի (1761-1846 թվականներ): Վարչական շրջանից 5 կմ հյուսիս, «Ավերք» կոչվող վայրում, կան անտիկ շրջանի բերդի ավերակներ: Վարչական շրջանում կա նաև թանգարան, որը խորհրդային տարիներին համարվում էր տարածաշրջանում եզակիներից մեկը: Այն տեղի դպրոցում հիմնել էր դպրոցի պատմության ուսուցիչ Պետրոս Նահապետյանը: Թանգարանում վարչական շրջանի հարուստ պատմության մասին վկայող փաստեր, նմուշներ են հավաքվում և ցուցադրվում: Թանգարանը աշխարհում եզակիներից է, որտեղ ցուցադրվում են նախորդ դարից պահպանվող հացի նմուշներ: Այնուհետև թանգարանը տեղափոխվում է եկեղեցու հարևանությամբ՝ գիտապատմամշակութային

կենտրոն: Ցուցասրահներում առանձին-առանձին ներկայացված են վարչական շրջանում կենցաղն ու զբաղվածությունը:

Վարչական շրջանում հաշվառված բնակչության թիվը Հայաստանի Հանրապետության ոստիկանության և անձնագրային ու վիզաների վարչության տրամադրած տվյալների համաձայն՝ 2022 թվականի փետրվարի 25-ի դրությամբ 2927 է:

ԾՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Արթիկ համայնքը ընդգրկված է «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» օրենքի 1-ին հոդվածում նշված ընկերությունների գործունեության հետևանքով վնասակար ազդեցության ենթարկվող համայնքների ցանկում: Արթիկ համայնքը, որպես ազդակիր համայնք՝ մասհանումներ է ստանում Փանիկ վարչական շրջանի «Վարանդա» ՍՊԸ-ի կողմից արտանետման անշարժ աղբյուրներից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման, ջրային ռեսուրս վնասակար նյութերի և /կամ/ միացությունների արտահոսքերի և ընդերքօգտագործման թափոնների տեղադրման կամ պահման համար վճարվող բնապահպանական հարկերից:

Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի աղտոտման հետևանքով մարդու առողջության վրա վնասակար ազդեցությունները կարող են կանխվել կամ նվազեցվել բնապահպանական կառավարման պլանով՝ սոցիալական ազդեցությունները մեղմացնող միջոցառումների և բնապահպանական միջոցառումների արդյունավետ զուգակցման և իրականացման արդյունքում:

Ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության /այսուհետ՝ ԱՀԿ/ սահմանման՝ առողջությունը ֆիզիկական, հոգևոր և սոցիալական բարեկեցության ամբողջությունն է, ոչ թե ֆիզիկական արատ չունենալը: Մարդու առողջությունը կախված է ոչ միայն օրգանիզմի ֆիզիոլոգիական և կենսաքիմիական համակարգերի աշխատանքից, այլև այդ ամբողջը պետք է լինի բարեկեցության բոլոր բաղադրիչների հետ միասին, այսինքն՝ մարդը կարող է լիարժեք առողջ լինել միայն այդ դեպքում: Միջազգային առողջապահական կազմակերպությունների գնահատմամբ, առողջ ապրելակերպը հանդիսանում է հիվանդությունների կանխարգելման արդյունավետ և քիչ ծախսատար միջոցներից մեկը: Ավելին, առողջ և ակտիվ ապրելակերպի ամրապնդմանն ուղղված միջոցառումները մարդկանց առողջությանն ուղղված լավագույն և հեռանկարային ներդրումներից են:

Ակտիվ ֆիզիկական կենսակերպին նպաստող պայմանների ստեղծումը ողջ հասարակության խնդիրն է: 21-րդ դարում ֆիզիկական ակտիվությանը պետք է վերաբերվել ոչ թե որպես շքեղության, այլ որպես անհրաժեշտության: Մինչդեռ ՀՀ 15 տարեկան և ավելի բարձր տարիքի բնակչության շրջանում ֆիզիկական թերակտիվության /հիպոդինամիկա/ ցուցանիշը կազմում է16,5 %:

Ֆիզիկական ակտիվությունը ֆիզիկական և հոգեկան առողջության հզոր միջոց է, սակայն շատերի առօրյա կյանքում ֆիզիկական ակտիվությունը բացակայում է, ինչը հանգեցնում է առողջության համար ծանր հետևանքների: Ֆիզիկական պատրաստվածությունը, հանդիսանում է պետության սոցիալական քաղաքականության կարևորագույն ուղղություններից մեկը:

Ներկայումս հանրապետության շատ համայնքներում բնակչության ֆիզիկական ակտիվության հնարավորությունները չափազանց սահմանափակ են: Տեղական ինքնակառավարման մարմինները կարևոր դերակատարություն ունեն ակտիվ կենսակերպի համար պայմաններ ու հնարավորություններ ստեղծելու գործում:

Արթիկ համայնքը իր բյուջեի հնարավորությունների սահմաններում մշտապես աջակցում է մարզական կյանքի կազմակերպմանը, ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսմանը: Համայնքը գրանցել է մարզական հաջողություններ տարբեր սպորտաձևերից: Համայնքում հատկապես սիրված են բասկետբոլը, վոլեյբոլը, թենիսը: Պատահական չէ, որ մարզական հաջողություններ են գրանցել և տարբեր մրցաշարերում հաղթել այս սպորտաձևերի ներկայացուցիչները: Չնայած գրանցած հաջողություններին, համայնքը բախվում է լուրջ խոչընդոտների՝ հատկապես մարզագույքի պակասի, մաշվածության, համապատասխան որակի ծածկույթով խաղահրապարակների տեսակետից: Լուրջ խնդիրներ կան նաև բնակիչների առողջ ապրելակերպի արմատավորմանը և ամրապնդմանը նպաստող բակային տարածքներում համապատասխան կահավորմամբ, ռետինե բարձրորակ, վնասվածքաանվտանգ ծածկույթով, գեղեցիկ գծանշումներով ունիվերսալ խաղահրապարկների բացակայության հետ կապված:

Նմանատիպ խաղահրապարկների կառուցումը դժվարանում է համայնքի բյուջեի սղության պատճառով: Խաղահրապարակների բացակայությունը անմիջականորեն ազդում է ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվողների թվաքանակի նվազեցման վրա:

Ելնելով վերոգրյալից՝ բնապահպանական հարկից մասհանվող գումարներով, նախատեսում ենք Արթիկ համայնքի Փանիկ վարչական շրջանում իրականացնել բակային սպորտի զարգացմանն ուղղված ծրագիր՝ մասնավորապես ռետինե բարձրորակ, վնասվածքաանվտանգ ծածկույթով, բասկետբոլի, վոլեյբոլի և թենիսի գծանշումներով ունիվերսալ խաղահրապարկի կառուցում: Նախատեսում ենք ծրագրի շրջանակներում խաղահրապարակի համար նաև կառուցել գիշերային լուսավորության համակարգ, ինչը թույլ կտա խաղահրապարակում բակային մրցումներ անցկացնել նաև օրվա մութ ժամերին: Միաժամանակ, նախատեսում ենք կառուցվող խաղադաշտի բոլոր կողմերում իրականացնել ծառատունկ՝ արևելյան տուաներով: Հավելենք, որ բակային խաղահրապարակը կծառայի ոչ միայն Փանիկի, այլ Փանիկին անմիջապես սահմանակից Անուշավան, Մեղրաշեն, Գետափ, Նոր Կյանք վարչական շրջանների բազմաթիվ երիտասարդներին, կնպաստի նրանց բակային սպորտով զբաղվելուն և ֆիզիկական կոփվածությունն ավելացնելուն:

ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Ծրագրի համառոտ նկարագրություն՝ Արթիկ համայնքի Փանիկ վարչական շրջանի երկրորդ փողոց շենք երկուսի բակի տարածքում բասկետբոլի, վոլեյբոլի և թենիսի գիշերային լուսավորության համակարգով փոքր խաղադաշտի կառուցում:

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը՝ համայնքում մարզական կյանքի կազմակերպում, ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսում:

Ծրագրի նպատակն է՝ ստեղծել պայմաններ ֆիզիկական ակտիվ գործունեությամբ զբաղվելու համար, վերականգնել ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ազգային համակարգում բակային սպորտով զբաղվելու մշակույթը, ապահովել բնակիչների համար հարմարավետ պայմաններ ֆիզիկական կուլտուրայով զբաղվելու և մարզվելու համար, գիշերային լուսավորության ապահովման միջոցով երկարացնել օրվա ընթացքում խաղահրապարակում մարզվելու ժամանակահատվածը, տարածել և ամրապնդել առողջ ապրելակերպի գաղափարը, կառուցվող խաղադաշտի համար արևելյան տուաներով ստեղծել բնական ցանկապատ:

Ծրագրի միջանկյալ արդյունքներն են՝ առողջ ապրելակերպի խրախուսում, համայնքի Փանիկ և հարակից բնակավայրերի պատանիների և երիտասարդների ներգրավվածության աճ:

Ծրագրի հիմնական շահառուները՝ Համայնքի և Փանիկ վարչական շրջանի ազգաբնակչությունը/երեխաներ, պատանիներ, մեծեր/:

Ծրագրի բյուջեն՝ Ընդհանուր բյուջեն՝ 4,523.390 հազար ՀՀ դրամ:

Ծրագրի բյուջեի ֆինանսավորում՝ բնապահպանական հարկից մասհանվող գումարներ և համայնքի բյուջե /մասհանվող գումարի 20 %-ի չափով/:

Հավելված 1.

ՆԱԽԱՀԱՇԻՎ – ՀԱՎԵԼՎԱԾ

Արթիկ համայնքի Փանիկ վարչական շրջանի երկրորդ փողոց շենք երկուսի բակի տարածքում բասկետբոլի, վոլեյբոլի և թենիսի գիշերային լուսավորության համակարգով փոքր խաղադաշտի՝ 15,0 մ x 10,0 մ կառուցում

Հ/Հ	Աշխատանքների և ձեռքբերվող ապրանքների անվանումը	Արժեքը առանց ԱԱՀ /դրամ/
1	Խաղադաշտի հիմնատակի պատրաստում	653 390
2	Բասկետբոլի, վոլեյբոլի և թենիսի գծանշումներով ունիվերսալ խաղահրապարկի ռետինե ծածկույթի իրականացում	2 925 000
3	Բասկետբոլի վահաններ, օղակների, ցանցի տեղադրում	225 000
4	Արագ տեղադրվող և հավաքվող թենիսի և վոլեյբոլի ցանցերի և հենասյուների տեղադրում	60 000
5	Գիշերային լուսավորության համար խաղահրապարակի 4 կողմում հենասյուների և լուսատուների մոնտաժում, ցանցին միացում	560 000
6	Արևելյան տուաներով ծառատունկ	100 000
ԸՆԴԱՄԵՆԸ		4 523 390

Ծանոթություն՝ Բնապահպանական հարկից մասհանվող գումարի չափը կազմում է 3 769 490 ՀՀ դրամ: Ծրագրի ընդհանուր բյուջեի համաֆինանսավորումը նախատեսվում է իրականացնել Արթիկ համայնքի համայնքային բյուջեից՝ բնապահպանական մասհանվող գումարի 20 %-ի չափով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. ԲԱԿԱՅԻՆ ՍՊՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ (irtek.am)

Համաձայնեցված է

Շրջակա միջավայրի նախարար՝

————————Հակոբ Սիմիդյան

«——»——————————2024 թ

Հավելված

Արթիկ համայնքի 2025 թ

բնապահպանական ծրագրի

Արթիկ համայնքի 2025 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնություններ և դրանց ֆինանսավորման համամասնությունները

Արթիկ համայնքի 2025 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Գումարը /հազ.դրամ/	Համամասնությունը, %
1	ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ	100,0	0,0
2	ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	3,769.49	100,0
2.1	*Արթիկ համայնքի Փանիկ վարչական շրջանի երկրորդ փողոց շենք երկուսի բակի տարածքում բասկետբոլի, վոլեյբոլի և թենիսի գիշերային լուսավորության համակարգով փոքր խաղադաշտի կառուցում*	3,769.49	100,0
	ԸՆԴԱՄԵՆԸ	3,769.49	100,0

Ձև 1

Համաձայնեցված է
Շրջակա միջավայրի նախարար
(լիազոր մարմնի անվանումը)
Հակոբ Սիմիդյան
(ստորագրություն,անուն ազգանուն)
«11» ապրիլի 2024թ.

Հավելված
Արթիկ
համայնքի
2025 թվականի
բնապահպանական ծրագրի

ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հ/Հ	ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԳՈՒՄԱՐԸ (հազար դրամ)
1	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ	100.00
1.1	*Փանիկ բնակավայրում արևելյան փոյաների փոկում՝ համաձայն ծրագրի*	*100.00*
2	ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ	3,669.49
2.1	*Փանիկ բնակավայրում մարզադաշտի կառուցում՝ համաձայն ծրագրի*	*3,669.49*
ԸՆԴԱՄԵՆԸ		3,769.49